Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ

2024 թվական

Միջոցառում	Կատարման ընթացիկ վիճակը
Միջոցառում 1.1 Հավաստագրված սերմերի, սածիլի և տնկանյութի արտադրության խթանում՝ գիտական կենտրոնների, գրանցված սերմարտադրողների և տնկարանների միջոցով	ԷՆ Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է 15099,39 տոննա սերմերի լաբորատոր փորձարկումներ, որից 59,6 տոկոսը կազմել է տեղական արտադրության սերմերը, իսկ 40,4 տոկոսը՝ ներկրված: Լաբորատոր փորձաքննության է ենթարկվել 575 նմուշ: 2024 թվականի ընթացքում տրամադրվել են թվով 73 հավաստագրեր՝ տեղական արտադրության 2461,3 տոննա սերմերի համար, որից՝ • 1164 տոննա աշնանացան և գարնանացան ցորեն, գարի • 16,03 տոննա բանջարաբոստանային, ընդեղեն և յուղատու մշակաբույսեր, • 1173,7 տոննա կարտոֆիլ: Տրամադրվել են 47409 զույգ պիտակներ, որից նախահիմնային՝ 204 զույգ, հիմնային՝ 25536 զույգ և 21669 զույգ առաջին վերարտադրության սերմերի համար: • Շրջանացման համար ներկայացված բանջարաբոստանային մշակաբույսերի նոր սորտերի քանակը՝ 16: ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է. • բանջարաբոստանային սերմերի արտադրություն՝ 139 կգ, • բանջարաբոստանային սածիլների արտադրություն՝ 420 000 հատ, ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում շրջանացման համար ներկայացվել են ՀՀ տեղական արտադրության, փոփոխվող կլիմայական պայմաններին հարմարված (չորադիմացկուն, տոթադիմացկուն) բանջարաբոս-տանային մշակաբույսերի թվով 16 սորտեր, ներմուծված 20 և ավել սորտերի փորձարկման աշխատանքները շարունակվում են:
Միջոցառում 1.2 Սերմարտադրող տնտեսությունների	ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն», «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ներում և «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ում իրականացվել է գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ

տեխնիկական հագեցվածության գնահատում, առաջարկությունների մշակում և համապատասխան տեխնիկական հագեցվածության ապահովում	լաբորատոր սարքավորումների ցանկի ճշգրտում: ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից՝ գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով, գիտական սարքավորումների գնման հայտ է ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե՝ «Վիտամինների և օրգանական թթուների միաժամանակյա որոշման ԲԱՀՔ համակարգ» ստանալու համար: Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի հայտ է ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե՝ «Կլիմայական խցիկ ֆիտոտրոն համակարգով՝ ներառված աքսեսուարներ» ստանալու համար: Արդյունքում, համապատասխան սարքավորումների միջոցով գիտական կենտրոնի լաբորատորիայում կատարվում է հիվանդությունների ախտորոշում (բակտերյալ, սնկային և վիրուսային), ինչպես նաև հողի, ջրի բաղադրության ուսումնասիրություն՝ «Ջրի և հողի բաղադրության ուսումնասիրման արագ փորձարկումների անալիզատոր»-ի միջոցով: Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից ԷՆ է ներկայացվել առաջարկություն «Մոլեկուլային գենետիկական հետազոտության» համար անհրաժեշտ սարքավորումների, պարագաների և նյութերի անհրաժեշտության վերաբերյալ:
Միջոցառում 1.3 Տնկանյութի հավաստագրման ամբողջական համակարգի, այդ թվում հավաստագրման գործընթացների թվայնացման համակարգի ներդրում և կիրարկում	Տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրման իրականացման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 14-ին ընդունվել և 2023 թվականի հոկտեմբերի 5-ին ուժի մեջ է մտել «Սերմերի և տնկանյութի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել են թվով 13 ենթաօրենսդրական իրավական ակտեր, հիմնվել է կենսաքիմիական լաբորատորիայի բաղադրիչներից մեկը, մշակվել են հրահանգ-ուղեցույցներ, ընդունվել է 1՝ «Խաղողի տնկանյութ» ազգային ստանդարտը, իսկ «Ծիրանենու տնկանյութ» և «Մորենու (ազնվամորենի) և մոշենու (անփուշ մոշենի) տնկանյութ» ազգային ստանդարտները կգործարկվեն 2025 թվականի հունվարի 1-ից: «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ին տնկանյութի հավաստագրման գործառույթի վերապահման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2024թ. հուլիսի 18-ի N 1124-Ն որոշումը:
Միջոցառում 1.4 Կերարտադրության խթանում, մասնավորապես՝ անասնակերի արտադրության, այդ թվում	Զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրների արոտավայրերի կառավարման փորձի ուսումնասիրման, երկարաժամկետ կտրվածքով արոտների կառավարման ուղղությամբ արդյունավետ քաղաքականության մշակման նպատակով համապարփակ հետազոտություն իրականացնելու համար ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դիմել է Ասիական զարգացման բանկին, որը պայմանագիր է կնքել համապատասխան ընկերության հետ: Ներկայումս

հիդրոպոնիկ եղանակով, ծավալների ավելացման նպատակով կերային մշակաբույսերի մշակության խրախուսում, արոտավայրերի և խոտհարքների գնահատում, բարելավման միջոցառումների մշակում	աշխատանքներն ավարտական փուլում են: Ավարտելուց և ամփոփելուց հետո կներկայացվի Վարչապետի աշխատակազմ: ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշմամբ հաստատվել է «Բուսաբուծության աջակցության» ծրագիրը, որի շրջանակում փաստացի իրականացվել է 19197 հա հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի ցանք, որից՝ 1 456 հա-ը բազմամյա խոտաբույսերի ցանքեր են:
Միջոցառում 1.5 Ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման խթանում և տարածում	ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025թթ. ծրագրի շրջանակում 2024 թվականին վարկային և փոխհատուցման բաղադրիչներով կնքվել են շուրջ 310 հա ընդհանուր մակերեսով հողատարածքներում ոռոգման արդիական համակարգերի ներդրման պայմանագրեր, իսկ ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերի համար տրվել է շուրջ 326 հա-ի փոխհատուցում: Միևնույն ժամանակ ինտենսիվ այգեգործության զարգացման աջակցության ծրագրերի շրջանակում 2024 թվականին հաստատվել է շուրջ 1350 հա-ի այգեհիմնման հայտ, որը ներառում է նաև ոռոգման արդիական համակարգերի ներդրում: Զարգացման Ֆրանսիական Գործակալության /ԶՖԳ/ աջակցությամբ իրականացվող և Եվրոպական Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող «Հայաստան-Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» Ծրագրի շրջանակներում ընտրված Օպերատորի /բելգիական A.E.S.A JV/ կողմից ձևավորվել են գյուղատնտեսական աջակցության խորհրդատվական երեք թիմեր, իրականացվում են Ծրագրի մեկնարկի աշխատանքներ:
Միջոցառում 1.6 Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծում, գործարկում, ազգային գեոպորտալում արտացոլելու նպատակով թեմատիկ շերտերի ստանդարտացման ուղեցույցի մշակում, ինտեգրում Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալին	Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծման նպատակով ընթացքի մեջ են միասնական էլեկտրոնային տեղեկատվական հարթակի ստեղծման աշխատանքները: Այդ նպատակով գույքագրվել են խաղողի ամբողջ այգետարածքները, և ընթանում են դրանց նույնականացման աշխատանքները, որոնց շուրջ 80%-ը նույնականացվել են: Խաղողի տնկարկների տեղեկատվությունն ազգային գեոպորտալի հետ ինտեգրելու նպատակով Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից Կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «ՀՀ-ում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման դրույթներին համապատասխան մշակվել է «Խաղողի տնկարկ» թեմատիկ շերտի ստանդարտը: Հիմնադրամի կողմից հավաքագրված խաղողի

	այգետարածքների վերաբերյալ տեղեկատվությունը կփոխադրվի Նախարարության GIS ծրագրով համալրված սերվերի վրա, տվյալ տեղեկատվությունը պարբերաբար ամբողջացնելու և թարմացնելու նպատակով հասանելիություն կապահովվի Հիմնադրամի համապատասխան մասնագետների համար, ազգային գեոպորտալի հետ կապահովի փոխհասանելիություն, որը կապահովի Հիմնադրամի կողմից ստեղծված տվյալների տեսանելիությունն ազգային գեոպորտալում:
Միջոցառում 1.7 Հումքի մթերման գործընթացին աջակցություն	Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2024 թվականին հաստատվել է 214 հայտ շուրջ 16.9 մլրդ դրամի ծավալով, որոնց շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել են 8037 հատ բերքի գնման պայմանագիր, իսկ ծրագրի մեկնարկից տրամադրված վարկերի համար սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է շուրջ 3.3 մլրդ դրամ: 2024 թվականին մթերվել է շուրջ 67.4 հազար տոննա պտուղբանջարեղեն և շուրջ 165.0 հազար տոննա խաղող: Ընթացիկ տարում մթերման աշխատանքներն ընթացել են առանց խոչընդոտների:
Միջոցառում 1.8 Ագրոպարենային ոլորտի ընկերությունների արտադրական կարողությունների հզորացում և արդիականացում	ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի սարքավորումների տրամադրումը տնտեսավարողներին: Ծրագրի շրջանակներում 2024 թվականին հաստատվել է 149 լիզինգի հայտ շուրջ 5.0 մլրդ դրամ ծավալով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 429 միավոր սարքավորում, իսկ ծրագրի մեկնարկից տրամադրված վարկերի համար սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 3.4 մլրդ դրամ:
Միջոցառում 1.9 Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի իրականացում	ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրերի շրջանակում 2024 թվականին հաստատվել է շուրջ 1350 հա այգեհիմնման հայտ: Ծրագրերի մեկնարկից մինչև 31.12.2024թ. փաստացի հիմնվել է շուրջ 3270 հա այգի:
Միջոցառում 1.10 Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի թարմացման միջոցառման իրականացում	ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը գյուղատնտեսութամբ զբաղվող տնտեսավարողներին: Ծրագրի շրջանակում 2024թ.-ին ձեռք է բերվել 920 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 242 միավոր տրակտոր: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 3.1 մլրդ դրամ: Ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար 2024 թվականին սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 879.2 մլն դրամ:
Միջոցառում 1.11 Գյուղատնտեսական	ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025թթ. ծրագրով նախատեսված էր փոխհատուցել մելիորացիայի ծախսերի 50%-ը՝ 30-200 հա

նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրում	հողերի կոնսոլիդացման դեպքում, որի արդյունքում կնքվել է 3 պայմանագիր՝ ընդհանուր 160 հա-ի համար: Ծրագրի լավարկման նպատակով կատարվել է ծրագրային փոփոխություն, համաձայն որի 2024թ. հունիսի 14-ից՝ 5-200 հա հողատարածք ձեռք բերելու և միավորելու դեպքում կփոխհատուցվի այդ հողատարածքների կադաստրային արժեքի 30%-ը: Արդյունքում, 2024 թվականին կնքվել է 10 պայմանագիր, որից 1-ը՝ 30-100 հա, իսկ 9-ը՝ յուրաքանչյուրը 5-30 հա հողերի կոնսոլիդացման համար:
Միջոցառում 1.12 Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում	2023 թվականի դեկտեմբերին հանրային ներդրումային կոմիտեի հինգերորդ նիստում ընդունված որոշմամբ հաստատվել է «Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում» ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը և հանձնարարվել է այն ներառել հանրային ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների ցանկում՝ ապահովելով ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների ստացման գործընթացը՝ համաձայն Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» N 175-Ն որոշմամբ սահմանված կարգի 43-րդ կետի 2-րդ ենթակետի: Հիմք ընդունելով վերոգրյալը, ՀՀ 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ) գծով շրջակա միջավայրի նախարարության ծրագրային ֆինանսավորման (Նոր նախաձեռնություններ) ամփոփ հայտը ձևավորելու նպատակով, ծրագիրը՝ որպես նոր նախաձեռնություն ներառվել է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ 2025-2027թթ. ՄԺԾԾ հայտում, որի իրականացման նպատակով Կառավարության 2024 թվականի 1064-Ն որոշմամբ հատկացումներ են նախատեսվել 1299176,0 հազ.դրամի չափով 2026 թվականի, 1399847,4 հազ.դրամի չափով՝ 2027 թվականի բյուջետային տարիների համար:
Միջոցառում 1.13 Գյուղատնտեսության ապահովագրության փորձնական ծրագրի իրականացում, մոնիթորինգ և գնահատում	Ծրագիրը մեկնարկել է 2020 թվականից: Մինչև 2023 թվականը ծրագրային ցուցանիշները տարեցտարի աճել են: 2023 թվականին ապահովագրվել է 13 մշակաբույս 4 ռիսկերից՝ 11662 հա: 2023 թվականին ապահովագրավճարը կազմել է 1.8 մլրդ դրամ, տրամադրվել է 2.7 մլրդ դրամի փոխհատուցում: 2024 թվականին ապահովագրվել են դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ՝ կարկուտ ռիսկից, հացահատիկային մշակաբույսերը (ցորեն/գարի/վարսակ)՝ երաշտ ռիսկից: 2024 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 27 ապահովագրական պայմանագիր, համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 21.9 մլն դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է շուրջ 247 հա:

	2024 թվականի գյուղատնտեսական տարվա համար կառավարությունը, բացի ապահովագրավճարի սուբսիդավորումից, մասամբ կիսում է ապահովագրական ընկերությունների ապահովագրական ռիսկը՝ ապահովագրական հատուցումների որոշակի շեմը գերազանցելու դեպքում փոխհատուցում տրամադրելու միջոցով: 2024 թվականին KfW-ի դրամաշնորհային բյուջեից սուբսիդավորման գումարների փոխանցման հետ կապված առաջացած տեխնիկական խնդիրների պատճառով Ինգո Արմենիա կազմակերպության նկատմամբ ունեցած պարտավորությունները ժամանակին չեն կատարվել: Այս առումով մշակվել է նախագիծ և հաստատվել Կառավարության կողմից, ըստ որի 2024 թվականի համար՝ KfW-ի համաֆինանսավորման մասը վճարվել է պետական բյուջեի հաշվին: Բացի այդ, Էկոնոմիկայի նախարարությունը համակարգին տեխնիկական աջակցություն տրամադրելու համար դիմել էր KfW-ին և Ֆինանսների նախարարությանը, ըստ որի Ֆինանսների նախարարության կողմից կազմվել է համաձայնագրի փոփոխության նախագիծ, շրջանառվել և ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ, սակայն Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում քննարկման արդյունքում հանվել է օրակարգից՝ պայմանով, որ որոշումը կկայացվի Կենտրոնական բանկի կողմից ներկայացվելիք նոր մոդելը քննարկելուց հետո: Միաժամանակ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ և Գերմանական զարգացման բանկի (այսուհետ KfW) աջակցությամբ Միջազգային խորհրդատվական ընկերությունը (MFS) իրականացրել է մոնիթորինգ և վերլուծություն՝ բարձր վնասաբերության իրական պատճառները պարզելու և համապատասխան առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Վերջին տարիներին գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում կլիմայի փոփոխության հետևանքով մեծ վնասներ են գրանցվել ոչ միայն Հայաստանում, այլ՝ Եվրոպական աշխարհամասի գրեթե բոլոր երկրներում: Մասնավորապես, ամենամեծ վնասները գրանցվել են մեր տարածաշրջանին հատուկ մշակաբույսեր (ծիրան, խաղող և այլն) աճեցնող երկրներում, օրինակ Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում: Ըստ միջազգային փորձագետների ուսումնասիրությունների վնասաբերության հիմնական խնդիրը վնասի գնահատումն է:
Միջոցառում 1.14 Գյուղատնտեսության ապահովագրության նոր պրոդուկտների մշակում,	Ծրագրի իրականացման ընթացքում, կլիմայի փոփոխության վնասաբերությամբ պայմանավորված, բարձր վնասաբերության իրական պատճառները պարզելու և համապատասխան առաջարկություններ ներկայացնելու, ապահովագրական համակարգի զարգացման, կարգավորման և լավարկման նպատակով, Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ, Վերականգնման վարկերի բանկի (KfW) կողմից ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության և

մասնավորապես՝ գյուղատնտեսական մշակաբույսերի, գյուղատնտեսական կենդանիների և գյուղատնտեսական գույքի	Վերականգնման վարկերի բանկի միջև ստորագրված 5,339,139.38 եվրո արժողությամբ «Գյուղատնտեսական ապահովագրության սխեմայի աջակցման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում փոփոխություն կատարելու և համաձայնագրով սահմանված ապահովագրավճարների սուբսիդավորումը ֆինանսավորելու համար հատկացված ֆինանսական օժանդակության 4,824,139.38 եվրո գումարից 500 000 եվրո գումարի չափով տրամադրելու նախագիծ՝ ապահովագրության գործընթացի խորհրդատվական և տեխնիկական աջակցություն նախատեսելու նպատակով: Ֆինանսների նախարարության կողմից կազմվել է համաձայնագրի փոփոխության նախագիծ, շրջանառվել և ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ, սակայն Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում քննարկման արդյունքում հանվել է օրակարգից՝ պայմանով, որ որոշումը կկայացվի Կենտրոնական բանկի կողմից ներկայացվելիք նոր մոդելը քննարկելուց հետո:
Միջոցառում 1.15 Փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում	ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ում փոփոխվող բնակլիմայական պայմաններին հարմարեցված նոր սորտերի ստեղծման ուղղությամբ ընթանում են սելեկցիոն աշխատանքներ: Բանջարաբոստանային մշակաբույսերի ներմուծված 20 և ավել սորտերի փորձարկման աշխատանքները կշարունակվեն նաև 2025 թվականին: Բանջարաբոստանային մշակաբույսերի տեղական արտադրության, փոփոխվող կլիմայական պայմաններին հարմարված (չորադիմացկուն, տոթադիմացկուն) թվով 16 սորտեր ներկայացվել են ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում շրջանացման: 2024 թվականին մեկնարկել է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման ծրագիրը»: Այն նպատակ ունի բարելավել խիստ խոցելի համայնքների պարենային անվտանգությունը, աջակցել վերջիններիս՝ ապրուստի միջոցներ, եկամուտ ստեղծող գործունեությանը և կլիմային հարմարվողական կարողությունների զարգացմանը: Ծրագիրը կմշակի վերականգնվող էներգիայի լուծումներ ՀՀ Շիրակի և Տավուշի մարզերի առնվազն 10 խոցելի համայնքների համար: Ծրագիրը կավարտվի 2026թ-ին, բյուջեն կազմում է շուրջ 3 մլն ԱՄՆ դոլար: Պարենի համաշխարհային ծրագրի կողմից ՀՀ բոլոր մարզերում կատարված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվել է «Կլիմայի փոփոխությունների ազդեցությունը Հայաստանում» վերլուծությունը, որում ներառված են նաև կլիմայի փոփոխությունների մեղմման և հարմարվողականու-թյան վերաբերյալ առաջարկություններ:

Միջոցառում 1.16 Աջակցություն ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության զարգացմանը	ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ում փորձարկվում են նոր, տեղական արտադրության օրգանական պարարտանյութեր, որոնց արդյունքների հիման վրա կառաջարկվի արտադրության մեջ ներդրման համար: ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ կատարվում է «Սիդերատ բույսերի և կենսաբանական պարարտանյութերի փորձարկում, կիրառման արդյունավետության գնահատում Հայաստանում կանաչ գյուղատնտեսության խթանման նպատակով» ծրագիրը: ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության զարգացման նպատակով 2025թ. կիրականացվի «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական իրավական ակտերի լավարկման ուղղված նախագծերի ներկայացում: Նախատեսվում է նաև ոլորտի զարգացմանն ուղղված պետական աջակցության մեխանիզմների կիրառություն: «ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) Ծրագիրը համատեղ իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության (ADA) և Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի կողմից (ՄԱԶԾ) / նպատակ ունի նպաստել կայուն, ներառական, նորարարական և շուկայական ուղղվածություն ունեցող ագրոբիզնեսի կանաչ ուղղութամբ զարգացմանը: Ծրագրի գործողությունները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի հյուսիսային մարզերում՝ Շիրակ, Լոռի և Տավուշ: Ծրագրի հատուկ նպատակներն են՝ նշված 3 մարզերում կանաչ գյուղատնտեսության խթանում, 5 արժեշղթաների համար կանաչ գյուղատնտեսության արժեշղթայի ներդրում (միրգ և հատապտուղ, բանջարեղեն, հատիկաընդեղեն, խոտաբույսեր, ոչխարաբուծություն), օրգանական գյուղատնտեսության տարածում: Կանաչ և օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերները վերապատրաստվել են HACCP-ի և Global GAP-ի վերաբերյալ՝ ապահովելու ավելի անվտանգ արտադրական գործողություններ, 79 ֆերմեր ստացել են տեխնիկական աջակցություն և հմտություններ՝ օրգանական արտադրանքի վաճառքի իրականացման և կենսաբազմազանության պահպանմանը նպաստելու համար: Ընդհանուր առմամբ, ԱԶԳ-ի և ՄԱԶԾ-ի կողմից 527 ֆերմեր ստացել է նորարարական տեխնոլոգիաներ և սարքավորումներ իրենց կանաչ և օրգանական գյուղատնտեսական գործունեության համար:
Միջոցառում 1.17 Խառը ցանքերի կիրառման խթանում ՀՀ բոլոր մարզերում	ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշմամբ հաստատվել է «Բուսաբուծության աջակցության» ծրագիրը, որով խրախուսվում է նաև բազմամյա խոտաբույսերի (առվույտ, կորնգան) մշակությունը հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի (գարնանացան ցորեն և գարի, վարսակ, ոլոռ) ենթացանքով (խառը ցանք): Ծրագրի շրջանակում փաստացի իրականացված 19197 հա հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և

	բազմամյա խոտաբույսերի ցանքերից 466 հա խառը ցանքեր են: Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ԷԿՈսերվ բնապահպանական ծրագրի աջակցությամբ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում իրականացվել է 543 հա տարիներ շարունակ չմշակված վարելահողերի բարելավում՝ պարենային և կերային մշակաբույսերի խառը ցանքերի կիրառմամբ: Համադրվել են տարբեր սերմնախառնուրդներ՝ ցորեն-առվույտ, ցորեն-կորնգան, գարի-առվույտ, գարի-կորնգան, հաճար-առվույտ, հաճար-կորնգան և այլն: Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում իրականացվել է 102 հա, իսկ Սյունիքի մարզի Սիսիան համայնքում իրականացվել է 441 հա չմշակված վարելահողերի բարելավում:
Միջոցառում 1.18 Աջակցություն ջերմատնային տնտեսությունների հիմնմանը	Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2024 թվականին կնքվել է 4 պայմանագիր՝ 1.2 հա ընդհանուր մակերեսով ջերմատան կառուցման համար: ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրի շրջանակում 2024 թվականին կնքվել են շուրջ 15.3 հեկտար ջերմատնային տնտեսության հիմնման 4 պայմանագիր: Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում 2024 թվականին հաստատվել է շուրջ 3.7 հա ջերմատնային տնտեսությունների հիմնման և ջերմատնային տնտեսություններում օգտագործվող սարքավորումների ձեռքբերման հայտ: Ընդհանուր առմամբ, ջերմատնային տնտեսությունների զարգացման նպատակով կնքվել են շուրջ 20 հա ջերմատնային տնտեսության հիմնման պայմանագրեր:
Միջոցառում 1.19 Տոհմային անասնաբուծության, թռչնաբուծության և ձկնաբուծության զարգացում՝ տոհմային կենդանիների ձեռք բերման աջակցության ծրագրի իրականացում, տոհմային կենդանիների կադաստրի վարում: Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանն աջակցություն	Տոհմային անասնաբուծության զարգացման, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների պահվածքի արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանն աջակցելու նպատակով ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ-ում անասնաբուծության խթանման պետական աջակցման ծրագրերը, որում ներառված են հետևյալ ծրագրերը՝ Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028թթ., Մթերատվության բարձրացման փորձնական ծրագիրը, Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագիրը: ՀՀ-ում 2025-2029թթ. տավարաբուծության զարգացման ծրագիրը և «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028թթ. ծրագրերը 2024 թվականին ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Անասնաբուծության և ակվակուլտուրայի զարգացման նպատակով իրականացվում են ՀՀ-ում 2019-2024թթ. տավարաբուծության զարգացման, ՀՀ-ում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերը: Տոհմային տավարաբուծության ծրագրի շրջանակում 2024 թվականին ձեռք է բերվել 269 գլուխ հոլշտին,

	սիմենթալ, շվից, ջերսեյ, մոնբելյարդ և անգուս ցեղերի տոհմային կենդանիներ: ՀՀ-ում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2024 թվականին 1 տնտեսավարողի հետ տարեկան 18 տոննա հզորության խեցգետնաբուծարանի հիմնման պայմանագիր է կնքվել: Նախաձեռնվել է տոհմային կենդանիների կադաստրի վարման գործընթացը և ռեեստրում արդեն ներառված են շուրջ 2000 տոհմային կենդանիների տվյալները:
Միջոցառում 1.20 Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցմանը կամ վերակառուցմանը և դրանց տեխնոլոգիական ապահովմանն աջակցություն	Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցմանը կամ վերակառուցմանը և դրանց տեխնոլոգիական ապահովմանն աջակցություն ծրագրի շրջանակներում 2024 թվականին կնքվել է պետական աջակցություն տրամադրելու վերաբերյալ թվով 6 պայմանագիր, կառուցվել և տեխնոլոգիապես ապահովվել է թվով 7 անասնաշենք: Ներկայումս ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և շրջանառության փուլում է գտնվում «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների ծրագիրը:
Միջոցառում 1.21 Ռեսուրսախնայող գյուղատնտեսության խթանում և զարգացում	Գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության խթանման, արտադրողականության բարձրացման, ինչպես նաև համախառն արտադրանքի ավելացման միջոցով պարենային անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով իրականացվում է ՀՀ կառավարության 2024թ. մարտի 14-ի N 384-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության» ծրագիրը, որի շրջանակում փաստացի իրականացվել է 19197 հա հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի ցանք:
Միջոցառում 1.22 Գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորման նոր մեխանիզմների մշակում և ներդրում	Գյուղատնտեսության ոլորտում մշակվել և ներդրվել են սուբսիդավորման նոր մեխանիզմներ, մասնավորապես. – հողերի կոնսոլիդացիայի ծրագրի շրջանակում առնվազն 5 հա գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման դեպքում փոխհատուցվում է Էկոնոմիկայի նախարարության հետ պայմանագիր կնքելուց հետո ձեռք բերված և միավորված առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի կադաստրային արժեքի 30%-ը, – մթերատվության բարձրացման 2025-2026 թթ. փորձնական ծրագրի շրջանակում նախատեսվում է փոխհատուցել ֆերմերների տնօրինած կովերի արհեստական սերմնավորման ծախսերի 70%-ը, – գյուղատնտեսական ապահովագրության ծրագրի շրջանակում 2024 թվականի գյուղատնտեսական տարվա համար բացի ապահովագրավճարի սուբսիդավորումից, նախատեսված է փոխհատուցում ապահովագրական ընկերություններին, մասնավորապես

	յուրաքանչյուր ապահովագրական ընկերությանը կփոխհատուցվի ապահովագրական ընկերության կողմից ընդհանուր հավաքագրած ապահովագրավճարի հանրագումարի 70 տոկոսի չափը գերազանցող, տնտեսավարողներին փոխհատուցված ապահովագրական հատուցումների 80 տոկոսը, – ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025 թվականների ծրագրի շրջանակում կարկտի առավել ակտիվ գոտիներում գտնվող թվով 270 բնակավայրերի 0.5-3 հա բազմամյա տնկարկներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար կապալառուին կփոխհատուցվի փաստացի կատարված ծախսերի 75%-ը, որը 1 հա-ի հաշվով չպետք է գերազանցի ծրագրով սահմանված ծախսի առավելագույն սահմանաչափի 75%-ը, – սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագրով նախատեսվում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ն ԱԱՀ վճարող համարվող սպանդանոցային գործունեություն իրականացնող տնտեսավարողներին, տրամադրել ֆերմերային տնտեսություններից գնված խոշոր եղջերավոր կենդանիների սպանդանոցային սպանդից ստացված մսեղիքի իրացման համար հաշվարկված ԱԱՀ-ի և ԱԱՀ-ի հաշվանցվող գումարների դրական տարբերության 75%-ի չափով աջակցություն, – ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրով նախատեսվում է մի քանի ուղղություններով մասնակի սուբսիդավորել ձեռք բերվող սարքավորումների համար անհրաժեշտ 20 տոկոս կանխավճարը, – կոնյակի սպիրտի արտահանման աջակցության ծրագրով նախատեսված է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը տնտեսավարող սուբյեկտներին տրամադրել աջակցություն՝ կոնյակի սպիրտների 100 հազար լիտրը (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) իրացվելուց հետո այլ խմբաքանակների իրացման իրավունքի ձեռք բերման համար վճարված լրացուցիչ 100 դրամ պետական տուրքի՝ արտահանված կոնյակի սպիրտների ծավալներին համարժեք չափով, – Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում գյուղատնտեսության ոլորտում բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման կարգով նախատեսվել է աղետի գոտու տարածքներում անկած կամ կորսված գյուղատնտեսական կենդանիների, ոչնչացված կամ կորսված կամ վնասված պտղատու ծառերի, հատապտղի թփերի ու ցանքատարածությունների դիմաց փոխհատուցման տրամադրում և սահմանվել են դրանց գնահատված արժեքները:

	Միաժամանակ, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ իրականացվել է Եվրամիության միասնական ագրարային քաղաքականության վարման փորձի ուսումնասիրություններ:
Միջոցառում 2.1 Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) սննդի անվտանգության համակարգի կամ ISO 22000 ստանդարտի ներդնման աջակցության ծրագրի մշակում	Մշակվել է «Որակի և անվտանգության կառավարման համակարգերի և արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է ISO 22000 և FSSC 22000 սերտիֆիկատների, ինչպես նաև վերջիներիս ներդրման խորհրդատվության համար ծախսերի փոխհատուցում: Նախագծի ընդունման դեպքում կարդիականացվեն ազգային արտադրողների բիզնես գործընթացները, կբարելավվի արտադրանքի որակը, կապահովվի արտադրանքի անվտանգությունը՝ համապատասխանելով ազգային և միջազգային լավագույն ստանդարտներին: Նախագիծը 2024թ. դեկտեմբերի 2-ին ներկայացվել է Արդարադատության նախարարություն:
Միջոցառում 2.2 Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակում	ԷՆ կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 8-ի N 657-Ն որոշմամբ ընդունվել է «ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N 1448-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ ռեֆերենս լաբորատորիայի նշանակմանն ուղղված օրենսդրական պահանջների արդիականացման, օրենսդրական անհամապատասխանությունները վերացնելու և համապատասխանության գնահատման վիճելի արդյունքների լուծման առաջադրման նպատակով: ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս պետական փորձարկման լաբորատորիաների նշանակման կարգը սահմանելու մասին» N 1448-Ն որոշմամբ ընդունված կարգի համաձայն, Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում 2024թ. նոյեմբերի 7-ին և դեկտեմբերի 18-ին հրապարակվել է հայտարարություն՝ սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս պետական փորձարկման լաբորատորիաների նշանակման հայտերի ընդունման մասին:
Միջոցառում 2.3 Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների ռիսկերի գնահատման	Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու, կասեցնելու կամ դադարեցնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը սահմանված կարգով քննարկվել է ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2024թ. նոյեմբերի 11-ի նիստում և առաջարկվել է սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և

գիտական կենտրոնների նշանակում	բուսասանիտարիայի ոլորտներում գիտական կենտրոնին ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություն տալու դեպքում պետական բյուջեից ֆինանսավորման վերաբերյալ համագործակցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ: Հաշվի առնելով վերը նշվածը՝ 2024 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ ԷՆ-ում շահագրգիռ մարմինների մասնակցությամբ կայացել է քննարկում, որի արդյունքներն ամփոփելուց հետո՝ նախագիծը, անհրաժեշտության դեպքում, կլրամշակվի և սահմանված կարգով կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:
Միջոցառում 2.4 Կենդանիների նույնականացման համակարգի ներդրում և բարելավում	2024 թվականի մայիսի 30-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» Կառավարության N 818-Լ որոշումը: Հաշվետու ժամանակահատվածում համարակալվել է 195 400 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի: 2025 թվականին նախատեսվում է մեկնարկել մանր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման գործընթացը:
Միջոցառում 2.5 «ՀՀ-ում բրուցելոզի վերահսկման և վերացմանն ուղղված միջոցառումների կանխարգելման» ծրագրի մշակում	«ՀՀ-ում բրուցելոզի վերահսկման, վերացման և կանխարգելման» ծրագիրը ներկայումս գտնվում է մշակման փուլում: «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում՝ հանրապետության բոլոր համայնքներում, 2024 թվականին «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է շուրջ 728 308 խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ արյունառում: Միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ենթակայության տակ գտնվող «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը իրականացնում է բրուցելյոզի կանխարգելման ծրագիր: Իրականացվում է գյուղատնտեսական կենդանիների բրուցելոզի դեմ պայքարի միջոցառում «Ցտեսություն Բրուցելոզ. Հայաստանում բրուցելոզի կանխարգելման, հայտնաբերման, և հսկողության համապարփակ մոտեցում» ծրագիրը համապետական մակարդակով: Ծրագրի տևողությունը 5 տարի է:
Միջոցառում 2.6 Անասնաբուժական դեղամիջոցների (հատկապես հակաբիոտիկների) շրջանառության վերահսկման մեխանիզմների ներդրում	Մշակվել է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

Միջոցառում 2.7 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում	2024թ. ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից բույսերի հիվանդությունների, վնասատուների և մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով, ՀՀ համայնքների 242500 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և հարող անմշակ հողատեսքերում իրականացվել են մշտադիտարկման աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա ՀՀ մարզերի առավել վարակված շուրջ 104187 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների, ծղրիդների և այլ առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնելու նպատակով, ՀՀ մարզերին անհատույց տրամադրվել են մկնասպան և միջատասպան թունանյութեր: ՀՀ մարզերում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ագրոքիմիական հետազոտությունների իրականացման նպատակով վերցվել են հողանմուշներ, կատարվել է 32200 հատ լաբորատոր փորձաքննություն՝ հողում մակրո և միկրոտարրերի քանակները որոշելու նպատակով: Համայնքներին տրամադրվել է 85 ագրոքիմիական քարտեզ:
Միջոցառում 2.8 Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրում	«Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրում» կետով սահմանված միջոցառման կատարումն ապահովելու նպատակով մշակվել և շրջանառվել է «Բուսասանիտարիայի մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ «Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու և դրա աշխատակարգը հաստատելու մասին» իրավական ակտի մշակման համար համապատասխան իրավական հիմք ունենալու նպատակով: «Բուսասանիտարիայի մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո, նախատեսվում է շրջանառել արդեն իսկ մշակված «Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու և դրա աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի նախագիծը:
Միջոցառում 2.9 Կլիմայի փոփոխության պայմաններում հիվանդությունների և վնասատուների	«Կլիմայի փոփոխության պայմաններում հիվանդությունների և վնասատուների ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումներ»-ի ամբողջական կատարման հարցի քննարկման նպատակով, 2024թ. հունվարի 17-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում կայացել է քննարկում՝ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման արդյունքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական սահմանի անցման կետերում պետական

ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումներ	վերահսկողության գործառույթները վերապահված են մաքսային մարմիններին, Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից առաջարկվել է սույն միջոցառման համար որպես պատասխանատու մարմին դիտարկել Պետական եկամուտների կոմիտեին: Քննարկման արդյունքները ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2024թ. հունվարի 19-ի թիվ 01/1034-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:
Միջոցառում 2.10 Լաբորատորիաների ցանցի ստեղծման մեխանիզմների մշակում և անհրաժեշտ մարդկային ու տեխնիկական ռեսուրսների հստակ հատկորոշում՝ • ներկա իրավիճակի, այդ թվում՝ մարդկային ու տեխնիկական ռեսուրսների • գնահատում, բացերի գնահատում, կարիքների վերլուծություն, • կարողությունների հզորացմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում	Մշակվել և շրջանառվել է «Լաբորատորիաների ցանցի ստեղծման մեխանիզմների մշակման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: 2024 թվականի հունիսի 13-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում շահագրգիռ մարմինների համապատասխան ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած քննարկման արդյունքում նախագիծը գտնվում է վերանայման փուլում:
Միջոցառում 3.1 Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի հաստատում և իրականացում	2023 թվականի հունիսի 29-ի N 1083-Լ որոշմամբ հաստատվել է Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և 2023-2026թթ. գործողությունների ծրագիրը: Ռազմավարության 2023-2026թթ. գործողությունների ծրագիրը ներառում է պարենային անվտանգության 4 բաղադրիչների (հասանելիություն, մատչելիություն, որակ և անվտանգություն, կայունություն և հարմարվողականություն) մասով 50 միջոցառում: Ամփոփվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել 2024 թվականի հաշվետվությունը:
Միջոցառում 4.1 Հետբերքահավաքային	ՀՀ ԷՆ և Հայաստանի Ներդրումային խորհրդի կողմից, ՎԶԵԲ-ի և Միացյալ Թագավորության կառավարության աջակցությամբ մշակվել և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել ՀՀ-ում

կարողությունների հզորացում (օրինակ՝ սառնարանային տնտեսություններ, պահեստներ, լոգիստիկ կենտրոններ և այլն)	թարմ գյուղատնտեսական արտադրանքի մթերման և իրացման կենտրոնների (լոգիստիկ կենտրոնների) ստեղծման ռազմավարական քայլերը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել և ներկայացվել են լոգիստիկ կենտրոնների տարբեր մոդելները, կառավարման մոտեցումները, լոգիստիկ կենտրոնների ձևավորմանն ուղղված տարբեր երկրների պետական քաղաքականությունը և իրականացրած քայլերը: Միաժամանակ ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը՝ օգտագործելով ինչպես գրասենյակային վերլուծության մեթոդը, (ներառյալ համապատասխան գրականության հայտնաբերում և ուսումնասիրություն), այնպես էլ տարբեր կառույցների և փորձագետների հետ խորը հարցազրույցի մեթոդաբանությունը, ինչպես նաև այլ երկրների նմանատիպ կառույցների հետ զրույցները: Միաժամանակ, Հայաստանի և Գերմանիայի միջև 2024 թվականին կայացած միջկառավարական խորհրդակցությունների ընթացքում առաջարկվել է քննարկել Մեծածախ շուկայի ստեղծման ներդրումային ծրագրի մշակման հարցում տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորությունը, և գերմանական կողմի հետաքրքրվածության արդյունքում ներկայացվել է մեծածախ շուկայի և լոգիստիկ կենտրոնի ստեղծման նախարարության կողմից առաջարկվող մոդելի տարբերակը: ՀՀ մարզպետարաններից ստացված՝ մարզերում 2024 թվականի ընթացքում միջազգային կառույցների աջակցությամբ կամ մասնավոր ներդրումներով ստեղծված, գործարկված, կառուցման փուլում գտնվող և առաջիկայում պլանավորված սառնարանային պահեստավորման վերաբերյալ տեղեկատվության համաձայն. 1) Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում առկա է 15 սառնարանային պահեստ, կառուցման փուլում է գտնվում 4-ը, 2) Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքում առկա է 2 սառնարանային պահեստ, կառուցման փուլում է գտնվում 12-ը, 3) Շիրակի մարզում կառուցման փուլում է գտնվում 2 սառնարանային պահեստ, 4) Արմավիրի մարզի Արմավիր համայնքում առկա է 1, Փարաքար համայնքում՝ 3, կառուցման փուլում է գտնվում 1 սառնարանային պահեստ, 5) Գեղարքունիքի մարզում առկա են 12 սառնարանային տնտեսություններ՝ 3446 տոննա ընդհանուր տարողությամբ: Ընդհանուր առմամբ, ներկայումս ՀՀ-ում գործում է շուրջ 1619 սառնարանային պահեստ:
Միջոցառում 4.2 Աշխարհագրական նշումների	ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված «Հայկական մածուն», «Հայկական լավաշ», «Հայկական բաստուրմա» և «Հայկական սուջուխ» աշխարհագրական նշումով արտադրանքը

մասին օրենքի բարելավում և ավելի քան 10 անվանում հայկական աշխարհագրական նշումներով արտադրանքի գրանցում	մտավոր սեփականության գրասենյակ գրանցման հայտ ներկայացնելու նպատակով անհրաժեշտ է ունենալ հավատարմագրված սերտիֆիկացնող մարմիններ: Ընթացքի մեջ է սերտիֆիկացնող մարմինների հավատարմագրման գործընթացը:
Միջոցառում 4.3 Բույսերի սորտերի պահպանության միջազգային միությանը (UPOV) ՀՀ անդամակցության ապահովում	««Բույսերի սորտերի պահպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 2024 թվականի մարտի 2-ից Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է «Բույսերի սորտերի պահպանության միջազգային միության» (UPOV) անդամ, որի արդյունքում ՀՀ-ում կապահովի այլ երկրների բուծողների իրավունքների պահպանությունը:
Միջոցառում 4.4 Հայաստանի գինիների առաջխաղացում	Հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման, գործարար նոր կապերի հաստատման և համագործակցությունների ձեռքբերման, արտադրանքի արտահանման ծավալների աճի խթանման նպատակով ապահովվել է մասնակցություն՝ 1) Բեռլինում 2024թ. հունվարի 19-ին կայացած «Կանաչ շաբաթ 2024» գյուղատնտեսական միջազգային ամենամյա ցուցահանդեսին, 2) Բեռլինում 2024թ. հունվարի 27-ին կայացած հայկական գինիների համտես-շնորհանդեսին, 3) Դուբայում 2024թ. փետրվարի 19-ին կայացած «Gulfood-2024» սննդի և խմիչքների 29-րդ միջազգային ցուցահանդեսին, 4) Դյուսելդորֆում 2024թ. մարտի 10-12-ը կայացած «ProWein 2024» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդեսին, 5) Երևանի «Անուշ» ռեստորանում 2024թ. ապրիլի 19-ին Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ներկայացվել են ուտեստի և գինու համադրության գաղտնիքները՝ բացահայտելու գինու շուրջ հյուսվող լեգենդները և իրականացվել է գինու համտես: 6) Միլան քաղաքում 2024թ. ապրիլի 22-ին կայացած Արցախի գինիների համտեսին, որի շրջանակներում Միլանում գտնվող Իտալիայի սոմելիեների ասոցիացիայի գլխամասում (www.aislombardia.it) տեղի է ունեցել «Արցախի գինիներ՝ համի վերջին վկաները» խորագրով արցախյան խաղողագործության վարպետության դասը, 7) Թբիլիսիում 2024թ. հունիսի 2-ին կայացած Merano գինու փառատոնին (Merano Wine Festival Georgia), 8) Մեքսիկայի Գուանախուատո նահանգում 2024թ. հունիսին կայացած 31-րդ Concours Mondial de Bruxelles կարմիր և սպիտակ գինիների մրցույթին,

	9) Նյու Յորքում 2024թ. հունիսի 25-26-ը կայացած «Vinexpo New York 2024» գինու միջազգային ամենամյա ցուցահանդեսին, 10) Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աջակցությամբ ավելի քան 40 գինեգործական ընկերություններ մասնակցել են օգոստոսի 3-ին և 4-ին Դիլիջանում կայացած DILIJAN WINE FEST 2024-ին: Փառատոնի ծրագրում՝ գինու համտես, համերագային ծրագիր, խաղողի տրորման արարողություն, գինով նկարչություն, գինու կազինո, կինոցուցադրություն, կոկտեյլներ պատրաստելու վարպետաց դաս, սաբրաժ: 11) Ռիգայում 2024թ. սեպտեմբերի 6-ին կայացած «Riga Food 2024» սննդի, խմիչքների, սննդի վերամշակման տեխնոլոգիաների, փաթեթավորման, նորարարության, ՀՈՌԵԿա և խանութների սարքավորումների և ծառայությունների 29-րդ միջազգային ցուցահանդեսին, 12) Սաուդյան Արաբիայի Ռիադ քաղաքում 2024թ. սեպտեմբերի 16-ին կայացած «Foodex Saudi-2024» միջազգային ցուցահանդեսին, 13) Փարիզում 2024թ. հոկտեմբերի 19-ին «Սիալ 2024» սննդի և խմիչքի 60-րդ միջազգային ցուցահանդեսին, 14) Շանհայում 2024թ. նոյեմբերի 5-10-ը «Չինաստանի 7-րդ միջազգային ներմուծման» ցուցահանդեսին (CIIE), 15) Մասնակցություն գինու զբոսաշրջության 8-րդ համաշխահային համաժողովին: Համաժողովը միտված է նպաստելու Հայաստանի՝ որպես գինու հնագույն օրրանի ճանաչելիության բարձրացմանն ու միջազգային հարթակներում դիրքավորմանը, Հայաստանի ներուժը ոլորտի գիտակներին ներկայացնելուն, ոլորտում տեղեկատվության և փորձի փոխանակմանը: 16) Մասնակցություն Խաղողագործության և գինեգործության միջազգային կազմակերպության (OIV) 100–ամյակի միջոցառմանը, 17) Շարունակվել է Grape Collective ամսագրում հրապարակումների շարքը և գինու բրիտանացի լրագրող Յակոպո Մացեոն ամերիկյան հանրահայտ Wine Country International Magazine էլեկտրոնային պարբերականում հրապարակել է հայկական գինեգործության մասին պատմող արդեն երկրորդ հոդվածը: 18) Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը հայտ է ներկայացրել և հաջողությամբ ընդգրկվել է ROTOBO (Japan Business Association ROTOBO) կողմից ներկայացված և Ճապոնիայի ԷԱԱ նախարարության կողմից ֆինանսավորվող «Business Matching» ծրագրում, որի միջոցով հնարավորություն է ստացել 2025 թվականի մարտի 11-ից 14-ը ազգային միասնական

	տաղավարով հայկական գինեգործական 10 ընկերության ներկայացնել Տոկիոյում կայանալիք FOODEX JAPAN 2025 ցուցահանդեսին՝ ներկայացնելով Հայաստանը որպես գինու նվիրական երկիր:
Միջոցառում 4.5 ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում	«ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում» միջոցառման ժամկետի փոփոխության հիմնական պատճառը միջոցառման պատասխանատու ստորաբաժանման փոփոխությունն է եղել, որի արդյունքում հնարավոր չէ եղել 2022 թվականի ընթացքում աշխատանքներ իրականացնել, 2023 թվականին ռազմավարության մշակման աշխատանքներն նախատեսվում էր իրականացնել Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված փորձագետների աջակցությամբ, վերջնարդյունքում ռազմավարության մշակման աշխատանքները վերապահվել են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությանը և նրանց «Տնտեսական հիմքեր՝ հանուն դիմակայուն Հայաստանի» ծրագրին, որոնց աջակցությամբ 2023 թվականի նոյեմբերից սկսվել է ռազմավարության մշակման աշխատանքները: ԱՄՆ ՄԶԳ «Տնտեսական հիմքեր՝ հանուն դիմակայուն Հայաստանի» ծրագրի աջակցությամբ մշակված «Հայաստանի արտահանման 2025-2030թթ. ռազմավարական ծրագիր» նախագիծը և գործողությունների ծրագիրը շրջանառվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում և ներկայացված առաջարկությունների հիման վրա գտնվում է լրամշակման փուլում, որի ավարտից հետո Նախագիծը և միջոցառումների ծրագիրը համապատասխան ընթացակարգով ներկայացվելու է կարծիքի ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին:
Միջոցառում 4.6 Տրանսպորտային փոխադրամիջոցների, մեքենասարքավորումների ձեռքբերմանը և կապիտալ շինարարության իրականացմանն աջակցություն	Կառավարության 2020թ. մարտի 26-ի N 355-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի շրջանակում վարկի/լիզինգի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով աջակցություն է տրամադրվում այն տնտեսավարողներին, որոնք ներգրավում են նշված վարկը/լիզինգը ստորև ներկայացված նպատակներով՝ Նոր/չօգտագործված մեքենասարքավորումների ձեռքբերում, ԱԱՀ վճարող կապալառու կազմակերպության կողմից կապիտալ շինարարության իրականացում, բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում, արտադրողականության աճի խորհրդատվություն: Ծրագրի մեկնարկից (2022թ. մարտ) մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը, ծրագրի շրջանակում Հ «Փոխադրումներ և պահեստային տնտեսություն» տնտեսական գործունեության դասակարգչի ներքո գործունեություն իրականացնող տնտեսավարողների կողմից մեքենասարքավորումներ ձեռք բերելու նպատակով ներգրավված վարկային/լիզինգային պորտֆելը կազմում է 30.7 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրի շրջանակում ձևավորված ընդհանուր պորտֆելի 8.4 %-ը:
Միջոցառում 5.1 ՀՀ ԷՆ աշխատակիցների և	2024թ. դեկտեմբերին ապահովվել է գյուղատնտեսական աջակցության խորհրդատվական թիմի անդամները /12 անդամ/ մասնակցությունը «Գյուղատնտեսական աջակցության ծառայությունների

գյուղացիական տնտեսությունների կարողությունների հզորացում գյուղատնտեսության ոլորտում առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման և կլիմայի փոփոխության համատեքստում	նոր ուսումնական գործիքակազմ» թեմայով դասընթացին, միտված խորհրդատուների փափուկ հմտությունների զարգացմանը:
Միջոցառում 5.2 Մասնագիտական խորհրդատվական խմբերի ձևավորում և խորհրդատվական ծառայության տրամադրում գյուղացիական տնտեսավարողներին	2024թ.-ի սեպտեմբերին Զարգացման Ֆրանսիական Գործակալության /ԶՖԳ/ աջակցությամբ իրականացվող և Եվրոպական Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող «Հայաստան-Ռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի շրջանակներում ընտրված Օպերատորի /բելգիական A.E.S.A JV/ կողմից ստեղծվել են գյուղատնտեսական աջակցության խորհրդատվական երեք թիմեր, որոնցից երկուսը գործում են ՀՀ Արարատի, իսկ մեկը Արմավիրի մարզերում: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական աջակցության խորհրդատվական թիմերը /12 անդամ/ 2024թ. հոկտեմբերին մասնակցել են «Գյուղատնտեսական կոոպերացիա» թեմայով դասընթացին: 2024թ. նոյեմբերին գյուղատնտեսական աջակցության խորհրդատվական թիմի անդամները /12 անդամ/ մասնակցել են «Հողերի կոնսոլիդացման արդիականությունը և հնարավորությունները ՀՀ-ում» թեմայով դասընթացին: 2024թ. դեկտեմբերին գյուղատնտեսական աջակցության խորհրդատվական թիմի անդամները /12 անդամ/ մասնակցել են «Գյուղատնտեսական աջակցության խորհրդատվական թիմի կողմից մատակարարվող ծառայությունները» թեմայով դասընթացին, ապահովվել է նաև թիմի անդամների մասնակցությունը «Գյուղատնտեսական աջակցության ծառայությունների նոր ուսումնական գործիքակազմ» թեմայով դասընթացին, որը նպատակ ունի զարգացնել նրանց հմտությունները:
Միջոցառում 5.3 Սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող սուբյեկտների և տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացում	Հայաստանի ազգային ագրարային համալսարանում հյուսվածքային բազմացման (in vitro) մեթոդներով շարունակվում է կարտոֆիլի մեծ պահանջարկ ունեցող 4 շրջանացված սորտերի բուսակների ստացման աշխատանքները. Ջերմատանը ավարտվել է 2000 բուսակներից մինի պալարների ստացումը, որոնք գտնվում են պահեստավորման մեջ (3000 հատ): Աշնան վերջում ստացվել է 7 տոննա սուպեր էլիտա՝ գարնանը 3000 մ2-ում տնկված կարտոֆիլի 9 սորտերի սուպեր-էլիտայի ցանքից: 2025 թվականին այն կտնկվի 1.6 հա-ի վրա էլիտա ստանալու նպատակով: Ջերմատանը տնկվել են ևս 2000 բուսակներ,

	որոնցից նոյեմբերին ստացվել են նոր մինի պալարներ: Դրանք ևս կպահպանվեն և 2025 թվականի գարնանը բաց դաշտում կտնկվեն՝ սուպեր-սուպեր էլիտա պալարներ ստանալու համար: Ձմռանը պահպանության է դրվել 7000 մինի պալար, որոնք ստացվել են ջերմատանը 4000 in vitro բուսակներից: Կարտոֆիլի ևս 4 (մեծ պահանջարկ ունեցող) սորտերի (in vitro) բուսակները գտնվում են կտրոնավորման և բազմացման լաբորատոր փուլում, որը ունենալու է շարունակական բնույթ և կրկնվելու է անընդհատ, սերմնաբուծական ցիկլը շարունակելու նպատակով: 2024թ. հոկտեմբերին պլանավորված ձևով ընթացել է կարտոֆիլի էլիտար և վիրուսազերծ սերմարտադրության ցիկլի ձևավորման աշխատանքները. Ձմեռային պահեստավորման են դրվել (3000 հատ) կարտոֆիլի մեծ պահանջարկ ունեցող Մադելինա սորտի մինի պալարներ, որոնց նոյեմբերի վերջին ավելացվել են ջերմատանը տնկված ևս 1400 բուսակներից ստացված մինի պալարներ (3000 հատ): Դրանք 2025թ . կտնկվեն Ստեփանավանի փորձատարածքում սուպեր-սուպեր էլիտա ստանալու նպատակով: Ձմեռային պահպանության են դրված նաև ստացված 7 տոննա սուպեր էլիտա՝ (կարտոֆիլի 9 սորտեր), որոնք ևս 2025թ. կտնկվեն բաց դաշտում և ստացված էլիտան կմատակարարվի ֆերմերներին՝ 2026թ. տնկելու համար: Հյուսվածքային բազմացման մեթոդներով շարունակվում է կարտոֆիլի մեծ պահանջարկ ունեցող 4 շրջանացված սորտերի բուսակների ստացման լաբորատոր աշխատանքները, որոնք նոր ժամանակակից ջերմատան շահագործումով (ֆինանսական միջոցների առկայության դեպքում) հնարավորություն կտան շարունակել մինի պալարների շարունակական ստացումը: Այսպիսով, կձևավորվի կարտոֆիլի էլիտար վիրուսազերծ տնկանյութի ստացման ամբողջական և շարունակական ցիկլը, ինչը նախատեսված է ծրագրով:
Միջոցառում 5.4 Ռեսուրսախնայող գյուղատնտեսության վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացում և իրազեկվածության բարձրացում	2024թ. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից իրականացվել են նորարարական տեխնոլոգիաների ներդրման և խորհրդատվության մի շարք աշխատանքներ. – իրականացվում է Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող 21T-4C087 «Գյուղատնտեսական մշակաբույսերի կաթիլային ոռոգան ռեժիմի և տեխնոլոգիաների ուսումնասիրություն» թեման, որի շրջանակում իրականացվել են խորհրդատվական աշխատանքեր կաթիլային ոռոգման ռեժիմի և տեխնոլոգիաների ուսումնասիրության արդյունքների մասին, – իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ տարբեր մշակաբույսերի և հողակլիմայական պայմանների համար հողի խոնավության և դրա պոտենցիալի գնահատման, ջրման ու ոռոգման նորմերի, ջրասպառման օպտիմալ ռեժիմի ազդեցության, մշակաբույսերի բերքատվության և հողային պայմանների վերաբերյալ,

	– խորհրդատվական աշխատանքներ են կատարվել Կոտայքի, Արմավիրի, Արարատի և Վայոց ձորի մարզերում ֆերմերային տնտեսություններում կաթիլային և անձրևացմամբ ոռոգման տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ, – առաջին անգամ հանրապետությունում կատարվել է կաթիլային ոռոգման նորմերի սահմանման մեթոդիկայի մշակում, որի հիման վրա ըստ գյուղատնտեսական և ոռոգման գոտիների մշակվել են ըստ բնակավայրերի գյուղատնտեսական մշակաբույսերի կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմերը, – ստացված արդյունքները ներկայացվել են ՋՕԸ-ի մասնագետներին, և իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ կաթիլային և անձրևացման ոռոգման ռեժիմների կիրարկման համար, – «Մելիորացիա» ՓԲԸ աշխատակիցների համար իրաականացվել են խորհրդատվական դասընթացներ նորագույն տեխնոլոգիաների, մասնավորապես ստորերկրյա ջրային ավազանի, բաց հուներում ջրաչափական աշխատանքների կազմակերպման, հողի և ջրի անալիզների իրականացման նորագույն տեխնոլոգիաների մասին, – ԷՆ մասնագետների համար իրականացվել են փորձագիտական աշխատանքներ կաթիլային ոռոգման տեխնոլոգիաների ներդրման խոչընդոտների հաղթահարման, դրանց ներդրման տեմպերի արագացման և համակարգերի արդյունավետության բարձրացման ուղղություններով, – ՋՕԸ-ի մասնագետների համար իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ գործող ոռոգման ռեժիմների ու նորմերի վերանայման մշակման ուղղությամբ, – Մասիս համայնքի ձկնաբուծական տնտեսություններում հեռացվող ջրերի օգտագործման, մաքրման ուղղությամբ իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ Սիս, Ռանչպար, Հովտաշատ բնակավայրերում տեղաբաշխված ձկնաբուծական տնտեսությունների պայմաններում, – «Անօդաչու թռչող սարքերի լաբորատորիայի» բազայի վրա Սյունիքի, Արմավիրի մարզերի ֆերմերային տնտեսություններում իրականացվել են հացահատիկի հիվանդությունների, վնասատուների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումներ, համատեղելով մշակաբույսերի արտաարմատային սնուցման աշխատանքների հետ: 2024թ. հոկտեմբերին Կոտայքի մարզի ֆերմերային տնտեսություններին, գերնորմատիվային բնակավայրերի ջրօգտագործողներին, ՋՕԸ աշխատակիցների համար իրականացվել է խորհրդատվություն, ենթահողային կաթիլային ոռոգման և արևային պոմպակայաններով ոռոգման

	աշխատանքների կազմակերպման հնարավորությունների մասին: ՋՕԸ մասնագետների համար կազմակերպվել է կաթիլային ոռոգման ռեժիմների կիրառման վերաբերյալ խորհրդատվություն:
Միջոցառում 5.5 «Գյուղատնտեսական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետի աջակցությամբ մշակվել է «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայումս գտնվում է լրամշակման փուլում՝ շահագրգիռ գերատեսչությունների կողմից ստացված կարծիքների հիման վրա:
Միջոցառում 6.1 Ագրոպարենային համակարգում ժամանակակից հմտությունների և կարողությունների զարգացում գյուղական բնակավայրերի պատանիների և երիտասարդների համար	Էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները կազմակերպել և իրականացրել են հանդիպումներ մարզային քոլեջների սովորողների հետ՝ որոնց մասնակցել են Մարալիկում՝ 30 ուսանող, Ստեփանավանում՝ 40 ուսանող, Բերդում՝ 25 ուսանող, Վարդենիսում՝ 25 և Գավառում՝ 20 ուսանող: Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 2023-2024 ուս. տարվանից ներդրել է պիլոտային «Ագրոտեխնոլոգիա դասընթաց» մասնագիտական կողմնորոշման խմբակները: 2024-2025 ուս. տարում Սյունիքի 9 դպրոցի փոխարեն արդեն խմբակներ են ձևավորվել 15 դպրոցում: Ընթացիկ տարում արդեն նախորդ ուսումնական տարվա ընթացքում փորձարկված դպրոցներում ձևավորվել են նաև 12-րդ դասարաններ և այս 2024-2025 ուս. տարվա ընթացքում կլինեն առաջին շրջանավարտները: Այսպիսով, ներկա դրությամբ Սյունիքի և Տավուշի մարզի 17 դպրոցներում արդեն գործում են 10, 11 և 12-րդ դասարաններ, իսկ Սյունիքի 6 դպրոցներում 2024թ. բացվել են 10 և 11-րդ դասարաններ: Ընդհանուր առմամբ, ավելի քան 350 աշակերտ ուսումնառություն է ստանում «Ագրոտեխնոլոգիա դասընթաց» շրջանակներում: 2024թ. նոյեմբերին ՀՀ մարզերում գյուղական բնակավայրերի պատանիների և երիտասարդների համար իրականացվել է ժամանակակից հմտությունների և կարողությունների զարգացման շուրջ վերապատրաստում, որին մասնակցել է 245 հոգի, այդ թվում՝ Արարատի մարզ՝ 72, Գեղարքունիքի մարզ՝ 104, Տավուշի մարզ՝ 55, Սյունիքի մարզ՝ 14: Իրականացվել է Տավուշի մարզի Դիլիջանի և Իջևանի ավագ դպրոցների Ագրոդասարանների աշակերտների գիտելիքների և կարողությունների գնահատում:
Միջոցառում 7.1 Գյուղատնտեսական աջակցության ծրագրերի իրականացման ընթացակարգի թվայնացում	2024թ. ընթացքում «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի հետ համատեղ ստեղծվել են փոխհատուցման բաղադրիչով մի շարք ծրագրերին դիմելու ընթացակարգի, պայմանագրի և համաձայնագրի կնքման գործընթացների, տեղազննության և մոնիթորինգի արձանագրությունների թվայնացման նախնական տարբերակները: Գործընթացները քննարկվել են USAID-ի հետ՝ նման գործիքակազմ ստեղծել գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի համար: USAID-ի

	գործընկերների հետ համաձայնություն է ձեռք բերվել աջակցելու տեխնիկական բնութագրի կազմման և soft-ի մշակման հարցում՝ մինչև 2025թ. ավարտը: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի թվայնացման վերաբերյալ համապատասխան նյութերն ուղարկվել են ԲՏԱՆ և ՀՏՀԳ (Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն)՝ կարծիքի, որից հետո այն ներկայացվելու է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդ՝ առաջիկա նիստի օրակարգում հարցը ներառելու նպատակադրմամբ:
Միջոցառում 7.2 Գյուղատնտեսությունում տնտեսավարողների հաշվառման համակարգի ստեղծում և վարում	Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծման նպատակով Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից հայտարարվել է երկու փուլով մրցույթ, հաղթող է ճանաչվել Իտալական ABACO S.P.A. կազմակերպությունը, սակայն գնման գործընթացի անգործության ժամկետում մրցույթի մասնակից կազմակերպություն <<Այյունեթվորքս>> ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան, որի վերաբերյալ ընդունվել է վարույթ: Գնման գործընթացը կասեցվել է մինչև դատարանի կողմից դատական գործի քննության արդյունքում վճռի կայացումը՝ մինչև ս/թ դեկտեմբերի 30-ը (գործ թիվ ԵԴ2/9695/02/24): Համակարգը հնարավորություն կտա թվայնացնել խաղողի այգետարածքները և ապահովել խաղողի կանխատեսվող ծավալների, մթերման նպատակով կնքված պայմանագրերի, մթերվող բերքի քանակների թափանցիկությունը և վերահսկողությունը: Գյուղատնտեսական ռեեստրի վարման տրամաբանությունը դրվել է այն սկզբունքով, որ սկզբում կստեղծվի խաղողի տնկարկների ռեեստր, հետագայում փորձից ելնելով՝ այն կկիրառվի այլ մշակաբույսերի համար ևս:
Միջոցառում 7.3 Գյուղատնտեսությանն առնչվող թեմատիկ շերտերի ստեղծում, վարում և ընդլայնում, ինտեգրում Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալին	Մշակվել և Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում հրապարակվել են Էկոնոմիկայի նախարարի 2024թ. ապրիլի 22-ի «ՀՀ ԷՆ տարածական տվյալների ֆոնդի ստեղծման, պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1113-Ն և մայիսի 2-ի «ՀՀ ԷՆ տարածական տվյալների և ծառայությունների մետատվյալների ստեղծման, պահպանման և թարմացման կանոնները սահմանելու մասին» N 1193-Ն հրամանները: Կադաստրի կոմիտեի կողմից վարվող Ազգային գեոպորտալին ինտեգրվելու և գյուղատնտեսությանն առնչվող թեմատիկ շերտերի ստեղծման, վարման և ընդլայնման նպատակով մշակվել է «Խաղողի տնկարկ» թեմատիկ շերտի ստանդարտը և շրջանառվել է «ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացվել է Կադաստրի կոմիտե՝ վերջինիս կողմից շրջանառվող «ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում ներառելու նպատակով: Նախագծի նոր փաթեթը Կադաստրի կոմիտեի կողմից ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

	Գյուղատնտեսության թվայնացման նպատակով՝ ArcGIS Enterprise (կայքէջի հասցե՝ https://maps.mineconomy.am/) սերվերում տեղադրվել են մի շարք գյուղատնտեսական տարածական շերտեր, որոնք դեռևս գործում են փորձնական ռեժիմով (հետագայում ստեղծվելիք շերտերը ևս նախատեսվում է տեղադրել այստեղ): Ներկայումս տեղադրված են շերտեր «Խելացի» անասնաշենքերի և ինտենսիվ այգեգործության ծրագրերի շահառուների, ինչպես նաև՝ ոռոգելի և անջրդի տարածքների վերաբերյալ: Նշված և հետագայում ստեղծվելիք տարածական շերտերը ամբողջականացնելու, Էկոնոմիկայի նախարարության կայքէջում տեղադրելու և ոլորտային տարածական տվյալների ինտեգրումն ազգային գեոպորտալին ապահովելու նպատակով անհրաժեշտ է համապատասխան մասնագետների ներգրավում: Այդ նպատակով առաջիկայում հայտարարվելու է մրցույթ: